ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 53 05
Ֆաքս (+374 10) 52 42 82

03.07.12 № 1.1/1.5/8876-12
Ձեր
№

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի
ԻՐԱՎԱԲԱՆ ՊՐՆ. ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 23-06-2012թ թիվ 174-ի 8 և թիվ 174-ի 9 (մտից՝ 26.06.2012թ, թիվ 21793-12 և 26.06.2012թ թիվ 21794-12) գրությունների, հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը պատասխանել է Ձեր կողմից նշված բոլոր հարցումներին, իսկ ինչ վերաբերում է Ձեր կողմից նշված 2-րդ հարցին, հայտնում ենք հետևյալը.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական /հատուկ/ ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային /ծառայողական/ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

<<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, եթե քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:

Այսինքն՝ տվյալ դեպքում, հաշվի առնելով Ձեր կողմից ներկայացված հարցմամբ պահանջվող՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության և ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցների կողմից ստացված դրամական պարգևատրումների գումարի չափի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նման տեղեկատվության տրամադրման սահմանափակման կամ թույլատրման վերաբերյալ դրույթ սահմանված չէ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

Միևնույն ժամանակ, <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ պարբերության համաձայն՝ պարգևատրումը միանվագ վճար է, որը տրվում է քաղաքացիական ծառայողին՝ հիմք ընդունելով նրա՝ տվյալ տարվա ծառայողական գործունեության կամ հատուկ առաջադրանքների վերաբերյալ անմիջական ղեկավարի եզրակացությունը կամ կատարողականի արդյունքները:

Նշվածից հետևում է, որ գործատուի կողմից աշխատողին տրամադրվող պարգևատրումները պարտադիր և պարբերաբար վճարվող գումար չէ, այլ կապված է աշխատողի կողմից կատարված աշխատանքների որակից, ժամանակից և վճարվում է անմիջական ղեկավարի եզրակացության կամ կատարողականի արդյունքների հիման վրա:

Բացի այդ, պահանջվող տեղեկատվությունը անմիջական կապ ունի աշխատողի անձնական տվյալների հետ, քանի որ հարցմամբ պահանջվում է տրամադրել յուրաքանչյուր աշխատողի կողմից ստացված պարգևավճարի գումարի չափի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկատվություն, թե ըստ հաստիքացուցակի ովքեր են պարգևատրվել:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 134-րդ հոդվածի համաձայն՝ Աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է՝ աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում, աշխատողի անձնական տվյալներն ստացող անձանց նախազգուշացնել և պահանջել հավաստում, որ այդ տվյալները կարող են օգտագործվել միայն այն նպատակներով, որոնց համար աշխատողները տեղեկացված են, աշխատողների անձնական տվյալներին ծանոթանալու իրավունք վերապահել միայն հատուկ լիազորություններ ունեցող անձանց,

ընդ որում՝ այդ անձինք կարող են ստանալ աշխատողի միայն անձնական այն տվյալները, որոնք անհրաժեշտ են որոշակի գործառույթ իրականացնելու համար:
Օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝ Աշխատողի անձնական տվյալների մշակման և պաշտպանման՝ սույն օրենսգրքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգը խախտող անձինք օրենքով սահմանված կարգով ենթակա են պատասխանատվության:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ գրությամբ պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է պագևատրում ստացած յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի /աշխատողի/ գրավոր համաձայնությունը:

Նշենք նաև, որ նունիսկ եթե տեղեկատվությունը Ձեզ տրամադրվի ըստ հաստիքների, այսինքն ոչ անվանական, ապա հաշվի առնելով տեսչության և գործակալության աշխատակիցների փոքրաքանակ թիվը, այդ տեղեկատվությունը կդիտարկվի որպես անվանական:

Միևնույն ժամանակ համաձայն <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի՝ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության,հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը:

Վերջում տեղեկացնենք նաև, որ ՀՀ պետական ապարատի աշխատակիցների աշխատավարձերի վերաբերյալ տեղեկատվություն դուք կարող եք ստանալ նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի <<Քաղաքացիական ծառայողների աշխատանքի վարձատրության մրցունակության բացահայտում>> թեմայով ամենամյա հետազոտությունից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ